Շ.Մ. - Երևանի գեղարվեստի պետական ակադեմիան 60 տարեկան է – թերթ, «Հայոց աշխարհ», Ե., 27.10.2006

Հոկտեմբերի 28-ին կնշվի Երևանի գեղարվեստի ակադեմիայի 60-ամյակը: Ակադեմիայի ռեկտոր Արամ Իսաբեկյանը երեկ ժուռնալիստների միությունում հրավիրված ասուլիսի ընթացքում մանրամասնեց, թե ինչպես են պատրաստվում նշել հայ նկարիչների և քանդակագործների բազում սերունդներ ճանապարհած արվեստի բուհի տարեդարձը:

Նրա ծանուցմամբ, հոկտեմբերի 28-ին ակադեմիայի շենքում կբացվի վերջինիս հիմնադիր Արա Սարգսյանի քանդակը, ապա կկազմակերպվի ցուցահանդես և հանդիսավոր նիստ, որի ընթացքում ակադեմիայի վաստակաշատ դասախոսներին կհանձնվեն պարգևներ:

Ի դեպ, գեղարվեստի ակադեմիան հիմնվել է 1945-ին՝ Երկրորդ համաշխարհայինից անմիջապես հետո: Այսինքն՝ 60-ամյակը անցյալ տարի պիտի նշվեր, բայց շենքը տխուր և անմխիթար վիճակում էր, և միայն պետության կողմից որոշակի ֆինանսական աջակցության շնորհիվ հնարավոր եղավ վերանորոգել այն, և փոքր-ինչ բարվոք պայմաններ ապահովել ուսանողների համար:

Երեկ ակադեմիայի անցած տարիների դժվարությունները ներկայացնելով՝ ռեկտորը կարևոր ձեռքբերումների շարքում առանձնացրեց ուսանողների աճը. 12 տարում 340-ին հասել է 900-ի, ստեղծվել են նոր ֆակուլտետներ: Ըստ Ա.Իսաբեկյանի, գեղարվեստի ակադեմիայի և՛ հիմնադրման, և՛ ինքնահաստատման ճանապարհը փշոտ է եղել: «Այն Արա Սարգսյանի կողմից հիմնվել է մեծ դժվարություններով, ունեցել է բազում հակառակորդներ: Չէ՞ որ նախկին ԽՍՀՄ-ի կազմում գտնվող հանրապետություններից ոչ մեկը նման բուհ չուներ»:

Ակադեմիան, որ սկզբում ուներ միայն գեղանկարչության և քանդակագործության բաժիններ, ավելի ուշ ընդլայնեց իր հնարավորություններն ու որակները: Ստեղծվեցին դիզայնի, դեկորատիվ արվեստի և արվեստաբանության բաժինները: Այսօր արդեն գեղարվեստի ակադեմիան իր մասնաճյուղերն ունի Գյումրիում, Դիլիջանում, Վանաձորում: Այն ամեն տարի կարողանում է իր երկու լավագույն ուսանողներին գործուղել արվեստների կենտրոն՝ Փարիզ ուսանելու: Նկատենք, որ ֆրանսահայ նկարիչների և արվեստագետների ջանքերով Փարիզում Սենայի ափին բացված արվեստանոցում են նրանք ուսանում և առնչվում եվրոպական մշակույթին:

Շ.Մ.